ՔԱՂՎԱԾՔ

«Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 25.01.2023թ. կայացած նիստի N 05 արձանագրությունից

Նիստին մասնակցում էին «Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի բոլոր 9 անդամները:

Օրակարգ՝

1. 2022-2023 ուստարվա տարիֆիկացիոն (վարձաչափային) և հաստիքային ցուցակների քննարկում:

Տնօրեն Էլ.Թումանյանը ներկայացրեց 2022-2023 ուստարվա տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակները: Աշակերտների թիվը 16.01.2023թ-ի դրությամբ կազմում է 396 աշակերտ, ժամերի թիվը՝ 580 ժամ, խմբերի ձևավորման արդյունքում՝ 34 ժամ տնտեսում, աշխատավարձի ֆոնդը՝ 7065,9 հազար դրամ՝ ներառյալ կամավոր ատեստավորված մեկ ուսուցչի գումարը, մեթոդմիավորման և դասղեկության համար վճարվող գումարը: Նշվեց, որ դպրոցում կա մեկ դասարան (12ֆ/մ) որտեղ աշակերտների թիվը 15-ից պակաս է, սակայն ֆինանսական վիճակի բավարար լինելու դեպքում դասղեկությունը կվճարվի 100%-ով:
Հաստիքային ցուցակում՝ հաստիքների թիվը՝ 48,86 դրույք է, որից 4,06 դրույքը՝ վարչական, 30,36 դրույքը՝ մանկավարժական և ուսուցչական, 14,5 դրույքը՝ վարչաօժանդակ: Նվազագույն աշխատավարձի դրույքաչափը, ըստ բարձրացված համապատասխան կարգի, կազմում է 96000 դրամ և 104000 դրամ (դրոշմ. կենսաթոշ. վճ. դեպքում):

Հիմք ընդունելով Էլ.Թումանյանի զեկույցը՝ կառավարման խորհուրդը

Որոշեց

Հավանություն տալ 2022-2023 ուստարվա տարիֆիկացիոն և հաստիքային ցուցակներին:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ա.Մկրտչյան

Քարտուղար՝ Ա.Մարտիրոսյան